

### ՅՈՒՐԻ ՎԱՉԱԳԱՆԻ ՄԱՅԱՂՑԱՆ (ծննդյան 80-ամյակին)



Լրացավ ճանաչված գիտնական, նորագույն պատմական և ռեգիոնալ երկրաբանության մասնագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Յուրի Վաչագանի Սայադյանի ծննդյան 80 և գիտական գործունեության 50-ամյակը:

Յու.Սայադյանը ծնվել է 1934 թ., Երևանում, ծառայողի ընտանիքում: 1959թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետը և նույն թվականին ըն-

դունվել աշխատանքի ՀՍՄՀ Երկրաբանական վարչությունում՝ որպես երկրաբան:

1968թ.-ից Յու.Սայադյանի գիտական գործունեությունը կապված է ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հետ: Նորագույն երկրաբանության բնագավառում մեծանուն գիտնական, ակադեմիկոս Կ.Կ.Մարկովի ղեկավարությամբ նա 1967թ. հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Յու.Սայադյանի երկարամյա գիտական հետազոտությունները նվիրված են Հայաստանի և Կովկասի նորագույն երկրաբանական պատմության հարցերին՝ շերտագրությանը, լիթոլոգիային, ռելիեֆի ձևավորմանը, նեոտեկտոնիկային, գեոէկոլոգիային, հնակլիմայաբանությանը, հնաաշխարհագրությանը և շրջակա միջավայրի ձևավորման պատմությանը: Այս հետազոտությունների արդյունքներն ամփոփված են ավելի քան 150 գիտական հոդվածներում և երեք մենագրություններում, որոնք հրատարակվել են միջազգային և հանրապետական գիտական մամուլում:

Իր աշխատություններում Յու.Սայադյանը առանձնահատուկ ուշադրություն է դարձրել նորագույն երկրաբանական պատմության տեսական հարցերին, շրջակա միջավայրի փոփոխություններին, դրանց ներկա վիճակի և զարգացման միտումների գնահատմանը, ինչպես նաև չորրորդական հասակի առաջացումների շերտագրության, լիթոլոգիայի, հնաաշխարհագրության, գեոմորֆոլոգիայի և այլ հարցերին: Յու.Սայադյանն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Հայաստանի տարբեր հիդրոտեխնիկական կառույցների ինժեներական-երկրաբանական հետազոտական աշխատանքներին:

Յու.Սայադյանի երկարամյա գիտական ուսումնասիրությունների

արդյունքներն ամփոփվեցին և ներկայացվեցին դոկտորական ատենախոսության տեսքով, որը հաջողությամբ պաշտպանվեց Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետի գիտական խորհրդում 2008թ.: Այն «Հայաստանի նորագույն երկրաբանության պատմություն» մենագրության տեսքով 2009թ. հրատարակվել է Երևանում, իսկ 2010թ. հաղթող է ճանաչվել Միջազգային մրցանակաբաշխության բնական գիտությունների բնագավառի «Գիտական գիրք» անվանակարգում:

Յու.Սայադյանն իր հետազոտությունների արդյունքները բարձր գիտական մակարդակով ներկայացրել է բազմաթիվ միջազգային, համամիութենական, համառուսական և հանրապետական գիտական խորհրդակցություններում: Գիտական գործունեությանը զուգահեռ Յու.Սայադյանն իրեն դրսևորել է նաև որպես ակտիվ գիտական կազմակերպիչ: 1972-1978թթ. նա եղել է ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի նոր տեխնիկայի գիտական պրոբլեմների հանձնախմբի գիտական քարտուղարը, 1978-1988թթ. աշխատել է ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտքարտուղարի պաշտոնում: Եղել է մի շարք գիտական միջոցառումների՝ Չորրորդական ժամանակաշրջանի հետազոտությունների IV-րդ համառուսական համաժողովի (Երևան, 1973), Երկրաբանական գիտությունների պատմության II-րդ երկկողմ՝ ԽՍՀՄ-ԳԴՀ հանդիպման (Երևան, 1979), Չորրորդական երկրաբանության Միջազգային Միության Հոլոցենի (INQUA) սիմպոզիումի (Երևան, 1982թ.), Միջազգային երկրաբանական կոնգրեսի նեոտեկտոնիկայի էքսկուրսիայի (IGC, Երևան, 1984) ակտիվ կազմակերպիչներից մեկը: Յու.Սայադյանն ընտրվել է Չորրորդական երկրաբանության ուսումնասիրության Հոլոցենի հանձնաժողովի Միջազգային Միության (INQUA) փոխնախագահ, ինչպես նաև Չորրորդական ժամանակաշրջանի երկրաբանության ուսումնասիրության ԽՍՀՄ ԳԱ խորհրդի անդամ, ընտրվել է Նյու Յորքի ԳԱ անդամ: Նա սերտորեն համագործակցում է ինչպես հանրապետության, այնպես էլ արտերկրացի գիտնականների հետ:

Իր բազմամյա բեղմնավոր գործունեության համար Յու.Սայադյանը 1978թ. արժանացել է ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի «Գովեստագրի», Միջազգային երկրաբանական կոնգրեսի նախապատրաստման և անցկացման աշխատանքներում ակտիվ մասնակցության համար պարգևատրվել է Պատվավոր դիպլոմով և Արծաթյա կրծքանշանով:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կոլեկտիվը սրտանց շնորհավորում է Յու.Սայադյանին հորեյանի առիթով, ցանկանում նրան քաջառողջություն և ամենայն բարիք:

**ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ  
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն**